

կ'գտնուին, սկսեալ արեգակէն մինչեւ հաստատուն աստեղըր, իսկ գալով ածխոյ գոյութեանը, ամեն ոք գիտէ թէ՛ գիտաւորա-
յին բեկորներն ճանչցուած օգաքարերուն խիստ մեծ մասը, որք
երկրիս վրայ ընկած են, հանքածխային բաղադրութիւն մ'
ունին:

Իսկ կորիզն կամ գլուխն մի տարրեր հանգամանք ունի, սա
հաստատուն կամ հեղուկ մարմին մ' է, որ կ'ընդունի եւ կ'ան-
դրադարձնէ արեգակնային լոյսը, ինչպէս կ'երեւի իւր լուսա-
պատկերի միջի շերտերէն, եւ որ կ'տեսնուի մինչեւ իսկ պոչին
տարածուած մասանցը մէջ եւս: Աւստի եւ կարելի է հետեւեալ
կերպիւ ամփոփել՝ ինչ որ գիտաւորաց վերայ կատարուած գիտ-
նական եւ լուրջ քննութիւններէ ստացուած է. այն է թէ՛ սոքա
նիւթեղէն մարմիններ են եւ ոչ առերեւոյթք, հաւաքուած հաս-
տատուն կամ հեղուկ կորիզի մը շուրջը, պարունակելով ածուխ,
ազօթ եւ ջրածին: Այս նիւթերն՝ արեգական ջերմութեան ներ-
գործութեամբը կ'տաքանան եւ կը՛գոյորշիանան, կը բորբոքին
վարսին մէջ եւ այս կերպիւ կ'արձակեն իւրեանց յատուկ հրդե-
հի մը լոյսը: Բաց աստի, բոլոր այս նիւթերն արեգակէն կը լու-
սաւորուին, եւ գիտաւորին ամեն մասերն եւս, կորիզն, վարսն
ու գէսը, իւրեանց սեպհական լուսոյ շառաւիղներն մեզ կ'ու-
ղարկեն:

Այս է աւստիկ գիտաւորաց մէջ նշմարուած իրողութեանց եւ
երեւութից մանրամասն պատկերը, եւ առ այս կըստհամաժա-
կին մարդկային բոլոր ստոյգ եւ ճշգրիտ ծանօթութիւնքը մինչեւ
ցարգ: Աոցանէ դուրս ինչ որ կայ՝ ամենքն եւս երեւակայութեան
արգիւնք են եւ ոչ երբէք գիտնական ճշմարտութիւնք:

(Երբեք)

ՆԻԿ. Մ. ԹԻԼՊԵՆՏՃԵԱՆՅ

ՅԵՏԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ:

(Երբեք)

Ամենից առաջ հետախուզի ուշադրութիւնը կանգ է առնում
այն փաստի վրայ, թէ մարդոյ՝ երկրի վրայ գոյութիւնից մի քանի
հազար տարիներից յետոյ երկրիս մակերեւութի երեք քառորդը
ծածկուած է կամ բոլորովին վայրենի ժողովրդով, կամ այնպի-

սխներով, որոնք գտնվում են շատ անգամ վատթար դրութեան մէջ քան թէ նոյն խի վայրենիները, եւ որոնք ոչինչ յոյս չեն տալիս դուրս գալու այդ դրութիւնից: Այս դրութիւնը հետազօտելով ինչպէս պատմաբանական փաստ եւ թափանցելով նորա ներքին մտայնը՝ մեզ հեշտ է համոզուել, թէ բնութիւնը այն տեղերի, ուր ապրում են այդ ազգերը, նոյնպէս եւ նոյա բնգունակութիւնը հազար տարի նրանից առաջ բոլորովին բաւական էին աճեցնելու համար անհամեմատ բազմաթիւ մարդիկ եւ աւելացնելու նրանց ամենի բարեկեցութիւնը: Բայց ինչո՞ւ համար նոքա ամբողջ դարեր կանգնած են մէկ տեղում: Ինչո՞ւ նոքա յառաջ չեն գնում եւ չեն բարւոքում իւրեանց առանձին եւ հասարակական դրութիւնը: Այս է մեր ժամանակի մեր բոլոր ապագայ քաղաքակրթութեան խնդիրը:

Մէկ միլիօն եօթնհարիւր հազար քառակուսի մղոն տարածութեան վրայ, որի համար այժմ խօսում ենք՝ բնակում են մօտ երկու հարիւր միլիօն մարդիկ: Կարծում են թէ՛ հին ժամանակ Եգիպտոսի բնակիչները քանիցս անգամ աւելի բազմաթիւ էին հիմիկուանից. բայց եթէ մենք ենթադրենք անգամ թէ՛ չորս հազար տարի սրանից առաջ բնակչաց թիւն էր միայն երկու միլիօն ու կէս *) եւ եթէ նրանից յետոյ իւրաքանչիւր յիսուն տարուայ ընթացքում միայն կրկնապատկուէր, որը, ինչպէս յայտնի է, դեռ չի կազմում արագ աճելութիւն, այն ժամանակ երեք հազար տարի սրանից յառաջ արդէն այդ ժողովուրդները կարող էին ծածկել բոլոր տարածութիւնը, որի մէջ բնակած են այժմ վայրենի եւ յետադէմ ազգերը, եւ ծածկել անգամ այնքան բազմաթիւ ժողովրդով, որ իւր թանձրութիւնով կ'գերազանցէր բոլոր եւրոպական եւ ասիական քաղաքակրթեալ երկիրների բնակիչներից: Յայտնի է թէ՛ հին ժամանակ խիտ ազգաբնակչութիւնը չէր բացառուպէս միայն Եգիպտոսի սեպհական: Միջագետքի հովիտը, փոքր—Ասիան, Պիրիան, մասն այժմեան Պարսկաստանի, մէկ մասը Ափրիկէի դէպի միջերկրական ծովը գերազանցում էին անհամեմատ աւելի խիտ ազգաբնակչութիւ-

(*) Մատենագիրները, որոնք ամենից սակաւ հակուած են դէպի չափազանց մեծացնելու բնակչաց թիւը հին Եգիպտոսի, այնու ամենայնիւ երեք հազար տարի առաջ գնում են թիւը հինգուկէս միլիօն:

հովի քան թէ այժմ: Հաստատումեն թէ՛ Թերէ եւ Մեմփիս չէին աւելի նշանաւոր քան Բաբելոն եւ Նինուէ: Հռոմ՝ Կեսարների ժամանակ աւելի սակաւ էր բնակիչներով, քան այդ երկու մայրաքաղաքները սեմական ցեղի իւրեանց ծաղկեալ ժամանակներում:

Այդ տարածութեան վրայ բնակող ցեղերից շատը գերազանցումէին ապացուցուած արագ աճելու բնութեակով: Եւ այնպէս՝ որ ոչ մի երկրայութեան տակ չի բնկնում թէ բնակիչների զարգացման դադարումը կախումն ունէր գլխովին ոչ այդ բնական պատճառներից: Այդ պատճառները դեռ աւելի քիչ կարելի է տեսնել այն ժամանակուայ մարդկանց անկարողութեան մէջ արդիւնաբերելու բաւական քանակութիւն սննդարար նիւթերի խիտ ազդաբնակութիւն կերակրելու համար:

Այն տեղերը, որոնց վրայ զետեղուած են յետագիմութեան թագաւորութիւնները արտադրումեն լիովին վայրենի բնութեան տպաւորութիւն. այս տեղ ամեն կողմից չքաւորութիւն է տիրում եւ ոչ մի տեղ չկան բարեյաջող պայմաններ կեանքը զարգացնելու: Մէկ տեղ տխուր ցամաքն եւ անախտ աւազուտ անապատներն են տիրում, նրանց յաջորդումեն անչափ խոնավուտ եւ ահագին ճահիճներ, մէկումը առողջութիւնը չոր եւ օթակէզ օդով է փչանում, միւսում գարշահոտութիւնով եւ շոգիներով: Նոյն խիտ տխուր անապատի առընթեր ապրելու հնարք չկայ բուսականութեան չափազանց զարգացումից եւ անթիւ բազմութիւնից վտանգաւոր կենդանիների եւ միջատների: Պանամեան պարանոցի վրայ բնութեան կարող արտադրութիւնը անյաղթելի արգելք էր լինում երկաթէ ճանապարհ բանալու ջնայելով՝ որ նորա երկայնութիւնը 85 վերստաչափ էր: Այս ճանապարհը ամենամեծ ճիգնթափութիւնով շինուելով՝ քանի մի ամից յետոյ ծածկուեցաւ բուսականութեամբ. երկաթուղւոյ յատակի համար գործադրուած ամենակարծր փայտը կլիմայի ազդեցութեամբ եւ անթիւ միջատներից մի տարուայ ընթացքում փչացաւ: Այ մի նախազգուշութիւն, ոչ մի սերունդ չկարողաւ դիմադրել կլիմայի կորստարեւ ազդեցութեանը. արեւադարձի տօթը, տենդը, կեղեքիչ միջատները այնպէս արագ կոտորումէին, որ 800 նոր եկած ձենացիներից քանի մի շաբաթուայ մէջ 600 հոգի մեռան: Մեծամեծ գետերը ոյն աստիճան լուսնումեն:

որոնց մէջով կարելի է անցնել ինչպէս ճաշիճներով, կամ այնքան լցուած են գիշատիչ կենդանիներով, որ անհնար է լողանալ: Նաւերի մէջ ճանապարհորդները փշանումն թունաւորութիւնով անհամար միջատներից, որոնք բուն են գնում ծառերի մէջ: Յամարի վրայ աւելի վատ է: Բուսականութիւնը այնպէս թանձր է, որ կապիկներին հեշտ է ցաթկել մէկ ծառի ծայրից միւսը. կարելի է մէկ տեղում պատահել հազարաւոր եւ միլիոնաւոր օձերի: Հարաւային Գվինէում մեծամեծ գիւղեր մնացել են դատարկ իւրեանց բնակիչներից վագրների բազմութիւնից, որոնք յափշտակումն են երեսանների եւ յարձակվումն կանանց վրայ:

Կեանի մէջ փառած բուսականութեան գոյորշին մահաբեր է մարդոյ համար: Խուլ, կուսական անտառների գոյորշիքն աւելի թունաւոր են տօթակէզ արեւի ժամանակ, քան բարեխառն կլիմաներում ճաշիճների գոյորշին եւ նրանց բնակչաց մէջ յառաջ են բերում հիւանդութիւններ, թուլութիւն եւ սերունդների այլանդակութիւն: Նաեւ հիւսիսային անրնակ երկիրներում (Тоңга) այնքան է միջատների բազմութիւնը, որ ճանապարհորդին բաւական է երկու րոպէ կանգ առնել եւ իջնել ձիէն երկար ասպանդակը կարճացնելու, եւ նրան պաշարումն այնքան միջատների բազմութիւն, այնքան կատաղութեամբ, որ նա ենթարկվումէ անծանօթ չարչարանքների: Նաեւ այն աւելի բնական տեղերում, ուր հոգը քիչ է մշակուած եւ վատ, ուր խոնաւութիւնը բաժանվումէ ո՛չ հաւասարաչափ եւ տօթերի ժամանակ երկրի գոյորշիները այնպէս վնասակար են, որ տեղ տեղ ամբողջ ամառուայ ընթացքում բոլոր բնակիչները գողացնումն եւ թեթեւութիւն զգումն միայն աշնանը: Մարգկային քաղաքակրթութիւնը ամեն տեղ հարթումէ այդ հակադրութիւնները. նա առանձնապէս օգնումէ աւելի կանոնաւոր բաժանելու կեանքի գլխաւոր պայմանը,— ջուրը: Մարդոյ աղգեցութեան տակ բնութիւնը դադարումէ խեղդել կեանքը՝ մէկ տեղում նորա համար նիւթերի չափազանց հաւաքուելով. իսկ միւս տեղում կատարեալ պակասութեան միջոցով: